ՀՏԴ 929: 947.925 Հոբոսյան + 39

Doi:10.54503/0135-0536-2024.1-318

ՍՈՒՐԵՆ ՀՈԲՈՍՅԱՆ.
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)*



Լրացավ հայտնի ազգագրագետ Սուրեն Գևորգի Հոբոսյանի ծննդյան 75-ամյակը: Ծնվել է Լոռու մարզի Շնող գյուղում 1949 թ. ապրիլի 17-ին: Մանկությունն անցել է Լոռու չքնաղ բնաշխարհում, հայ ավանդապահ ընտանիքում: Դեռևս մանկուց նա սիրել է հայրենի հողն ու ջուրը, սովորել հող մշակել, ծառ ու ծաղիկ խնամել, մեղու պահել, մարդու աշխատանք հարգել և ներդաշնակ լինել բնությանն ու միջավայրին: Այդ ամենն իր բարենպաստ ազդեցությունն է թողել նրա՝ որպես անհատականություն ձևավորման, արժեհամակարգի ու աշխարհընկալման կայացման, թերևս նաև՝ ճիշտ մասնագիտություն ընտրելու գործում:

Գյուղի դպրոցն ավարտելուց հետո՝ 1966 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հնագիտության բաժինը, որն «ազգագրություն» մասնագիտությամբ ավարտելուց հետո՝ 1971 թ., աշխատանքի է ընդունվել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) ազգագրության բաժնում: Դասական ազգագրական կրթություն ստանալը շատ կարևոր նշանակություն ունեցավ նրա որպես գիտնական կայացման գործում: Այդ թվականներին ազգագրության բաժնի գերակա խնդիրն էր «Հայաստանի պատմազգագրական ատլասի» կազմումը, և բաժնի բոլոր աշխատակիցները, բաժանված «Բնակավայր և բնակարան», «Երկրագործական մշակույթ», «Անասնապահական մշակույթ» «Ազգային տարազ» խմբերի, իրականացնում էին այդ ծրագիրը: 1972–1978 թթ. դաշտային աշխատանքների փորձառության առումով շատ կարևոր էին Ս. Հոբոսյանի և նրա երիտասարդ գործընկերների որպես գիտնական կայացման համար: Մեր հոբելյարն ունի ազգագրագետին հատուկ կարևոր հատկանիշներ. հարգում է մարդկանց ինքնությունը և կարծիքը, հեշտ է հաղորդակցվում մարդկանց հետ, լավ ունկնդիր է և զրուցակից, հարգանք ու վստահություն է առաջացնում տարբեր տարիքային խմբերի բանասացների շրջանում: Դրան զուգահեռ՝ ունի հումորի հրաշալի զգացողություն և լավ ասացող է: Ինչպես ժողովուրդն է ասում՝ մեծի հետ մեծ է, փոքրի հետ՝ փոքր: Մի կարևոր հատկանիշ ևս. մեծերի նկատմամբ հարգալից է և մշտապես պահել է ավա-

---

* *Ներկայացվել է 27. II. 2024 թ., ընդունվել է տպագրության 22. III. 2024 թ.:*

գության սկզբունքն ու դրա արդյունքում արժանացել շրջապատի հարգանքին: Նա դաշտային հետազոտության արհեստավարժ կատարող է: Դաշտային ազգագրական աշխատանքը և նյութերի գրառման հմտություններին տիրապետելը ուման գործնական շարունակությունն էին: Ս. Հոբոսյանը նշանավոր ազգագրագետներ Վարդ Բդոյանի, Դերենիկ Վարդումյանի, Էմմա Կարապետյանի, Յուրի Մկրտումյանի, Սերգեյ Հարությունովի արժանավոր հետևորդն է: Երկար տարիներ՝ 1970–1980-ական թվականներին, եղել է Երևանի պետական համալսարանի ազգագրական գիտարշավների մշտական անդամ և սիրով աջակցել ուսանողներին մասնագիտության մեջ նվիրագործվելու գործընթացում:

Հենց այդ տարիներին ձևավորվեց Ս. Հոբոսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայոց տնտեսական ավանդական զբաղմունքներ՝ երկրագործական մշակույթ, երկրագործական մթերքների վերամշակման ժողովրդական գիտելիքներ և հմտություններ, միջոցներ ու եղանակներ, ձիթհաններ, հնձաններ, ջրաղացներ: Գյուղին և գյուղական կոլորիտին քաջածանոթ ազգագրագետի հայացքը ներսից էր, շատ մշակութային երևույթներ և տարրեր, աշխատանքային գործընթացներ նա խորքից ճանաչել էր դեռ մանկության ու պատանեկության տարիներից, և դա եղավ նրա հետագա մասնագիտական հաջողության գրավականը:

Նպատակ ունենալով մոռացությունից փրկել մեր ժողովրդի ավանդական մի տնտեսաձև ևս՝ ազգագրության բաժնի վարիչ Դ. Վարդումյանի առաջարկությամբ Ս. Հոբոսյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեմա ընտրվեց «Հայոց ձիթհանության մշակույթը»: Աշխատանքն իրականացրեց Ջավախքում, Շիրակում, Գեղարքունիքում, Սյունիքում, Արցախում և այլ վայրերում հավաքած դաշտային ազգագրական նյութերի հիման վրա, որի արդյունքում 1998-ին պաշտպանեց ատենախոսական աշխատանքը: 2007 թ. հրատարակվեց «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 23-րդ հատորում:

Ս. Հոբոսյանի գիտական հետազոտությունների շարքում կարևոր տեղ է գրավում հայոց բուն երկրագործական մշակույթ՝ խաղողի մշակության և գինու արտադրության ժողովրդական եղանակների ուսումնասիրությունը: Տևական աշխատանքի շնորհիվ դաշտային ազգագրական նյութերի ու գրավոր աղբյուրների պարունակած տարաբնույթ տվյալների հիման վրա կատարված նրա գիտական հետազոտությունները տեղ են գտել այդ հարցին նվիրված երեք կոլեկտիվ մենագրություններում: Դրանք են՝

- *«Գինին հայոց ավանդական մշակույթում» (Հարությունյան Ս., Քալանթարյան Ա., Պետրոսյան Հ., Սարգսյան Գ., Մելքոնյան Հ., Հոբոսյան Ս., Ավետիսյան Պ., Գասպարյան Բ.), Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2005, 306 էջ:*
- *«Հայկական խաղող և գինի» (Հովհաննիսյան Ն., Եսայան Ա., Բոբոխյան Ա., Դալլաքյան Մ., Հոբոսյան Ս., Գասպարյան Բ.), Երևան, «Անտարես» հրատ., 2017, 440 էջ:*
- *«Խաղողի և գինու հայոց մշակույթը» (Հոբոսյան Ս., Գասպարյան Բ., Հարությունյան Հ., Սարատիկյան Ա., Ամիրխանյան Ա.), Երևան,* “Print Box” *տպագրատուն, 2021, 437 էջ:*

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ վերջին տարիների ձեռքբերումներից է Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի «Ժողովուրդներ և մշակույթներ» մատենաշարով հրատարակված հայ ժողովրդի ազգագրությանը նվիրված «Армяне» *ժողովածուն (Մոսկվա, 2012): Մեծ է Ս. Հոբոսյանի ավանդն այդ ժողովածուն կազմելու և պատշաճ ձևով հրատարակելու գործում: Ինստիտուտի ղեկավարության և ազգագրության բաժնի համապատասխան մասնագետների ջանքերով հայոց էթնիկ պատմություն, տնտեսական զբաղմունքներ, արհեստներ, կենսապահովման մշակույթ, ընտանեկան կենցաղ, հավատալիքներ, ժողովրդական մշակույթ, ժամանակակից էթնոմշակութային գործընթացներ և այլ թեմաների շուրջ հաջողվեց միավորել շուրջ 50 հայ գիտնականների, որոնք սեղմ ժամկետում իրականացրին այդ պատասխանատու ու կարևոր աշխատանքը:*

Ս. Հոբոսյանն ազգագրական հետազոտություններին զուգահեռ զբաղվել է նաև հնագիտական աշխատանքներով: Հանրապետության տարածքում ծավալվող հողային աշխատանքների ու դրանց արդյունքում հուշարձաններին սպառնացող վտանգը կանխելու նպատակով 1986 թ. ՀԱԻ-ում ստեղծվում է «Նորակառույցների հնագիտություն» բաժին (ղեկ՝ Ա. Քալանթարյան), որի կազմում Ս. Հոբոսյանը մասնակցել է հանրապետության տարբեր շրջաններում կազմակերպված փրկարարական պեղումներին: 1989–2005 թթ., որպես արշավախմբի պետի տեղակալ, մասնակցել է մեր երկրի ամենանշանավոր հնագիտական հուշարձաններից մեկի՝ Լոռի Բերդի դամբարանադաշտի պեղումներին:

«Թեղուտի հանքավայրի իրացման գոտում հայտնված պատմամշակութային հուշարձանների հնագիտական ուսումնասիրության և պեղումների» ծրագրով 2009–2021 թթ. Ս. Հոբոսյանը ղեկավարել է փորձառու մասնագետներով համալրված հնագիտական արշավախումբը: Շնող և Թեղուտ գյուղերի շրջակա տարածքներում այդ տարիներին հայտնաբերվել է վաղբրոնզեդարյան, միջին բրոնզի, ուշբրոնզեդարյան, հելլենիստական դարաշրջանի և միջնադարյան շուրջ 50 հուշարձան, որոնց պեղումները հարուստ նյութեր են տրամադրել Հայաստանի վաղ շրջանի պատմության համար: Ս. Հոբոսյանի և հնագիտական արշավախմբերի անդամների տարիների աշխատանքի արդյունքում հրատարակության է պատրաստվել Շնող գետի ավազանի հնագիտական հուշարձանների պեղումների կատալոգը: Փաստորեն, ավանդական մշակույթը լավ իմացող ազգագրագետը նաև հնագույն մշակույթի գիտակ է:

Այսօր էլ ազգագրագետ Ս. Հոբոսյանը հաջողությամբ շարունակում է իր ազգօգուտ և հայանպաստ աշխատանքը՝ ուսումնասիրելով ու ամբողջացնելով մեր ժողովրդի ավանդական տնտեսական զբաղմունքների վերաբերյալ գիտական հետազոտությունները: Գիտնականի առաջնահերթ նպատակներից է ավարտին հասցնել «Ջուրը հայոց մշակույթում» խորագրով ուսումնասիրությունը և ամբողջացնել հացահատիկների վերամշակման ժողովրդական եղանակների ու միջոցների վերաբերյալ իր՝ տարիների ընթացքում հավաքած դաշտային ազգագրական հարուստ նյութերի ժողովածուն:

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ-ի ազգագրության բաժինը, Ս. Հոբոսյանի գլխավորությամբ, արդյունավետ գիտահետազոտական աշխատանքներ է կատարում, բաժինը համալրվում է երիտասարդ կարող ուժերով: Այժմ նա ղեկավարում է ատենա-

խոսական երեք աշխատանք: Սերտ համագործակցում է հայաստանյան ազգագրական բնույթի ամենախոշոր թանգարանի՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության թանգարանի հետ՝ գործուն մասնակցելով և աջակցելով գիտական կարևոր միջոցառումների:

Ի խորոց սրտի շնորհավորում ենք մեր գործընկերոջը՝ Սուրեն Հոբոսյանին հոբելյանի կապակցությամբ և մաղթում մասնագիտական նորանոր ձեռքբերումներ:

ՍՎԵՏԼԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Պ. գ. թ., Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի գիտական գծով փոխտնօրեն, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ մշակութային ազգաբանության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց նյութական մշակույթ, կանանց հիմնախնդիրներ: Հեղինակ է 3 գրքի և շուրջ 80 հոդվածի:
ORCID:0000-0003-1058-5105; sv_ethnomuseum@yahoo.com